



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

14058

891.71  
S-80

19 NOV 2010



23 SEP 2013

891.71-3

ԿՈՄՍ ԼԵՒ ՏՕԼԱՏՈՅՑ

17 548

S-80  
ար.

1206

# ԱՍՏՈՒՆ ԹԻ ՄԱՄՈՆԱՅԻՆ

1007  
32322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԵԱՆ  
ՀԱՅՈՒՆԱՄԵԱԿԻ առիթով թարգմանեց  
ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.



Բ. Գ. Ռ  
ՏՊԱ ՏՊԱ  
ՏՊԱ ՏՊԱ  
ՏՊԱ ՏՊԱ

1903.

14058

000.0.15. 202008

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՇՏՈԼՈՒԹՅՈՒՆ

Дозволено Цензурою,  
23 Января 1903 года, г. Тифлисъ.

## ԱՍՏԵՂԻՆ ԹԵՇ ՄԱՄՈՆՅԱՅԻՆ.

«Ոչ մի ծառայ չի կարող երկու տէրերի  
աղջյուղ ծառայել. որովհետև կամ մէկին կատէ, իսկ  
առ չել միւսին կըսիրէ, և կամ մէկին կը մհծարէ, իսկ  
միւսին կարհամարէ. 2էք կարող ծառայել Աս-  
տծուն և մամօնյախն» (Ղոկ. ՓԶ, 13):

«Ով որ ինձ հետ չէ, հակառակ է ինձ.  
և ով որ ինձ հետ չէ ժողովում՝ ցրում է»  
մասին ասդաս (Մթ. ՓԲ, 30):

Արգաւանդ հողի ահազին տարածութիւններ,  
որոնց վրայ կարող էին կերակրուել այժմ թշուա-  
ռացող միլիոնաւոր ընտանիքներ, բռնուածէ ծիա-  
խոտով, խաղողով, գարեխով, գալլակով և, մեծ  
մասամբ, հաճարով ու կարտօֆիլով, որոնք գործ  
են ածոււմ ողելից խմիչքներ պատրաստելու հա-  
մար. այն է՝ գինի, գարեջուր և, գլխաւորապէս,  
օղի:

Միլիոնաւոր բանուորներ, որոնք կարող էին  
օգտակար գործեր կատարել մարդկութեան հա-  
մար, դրանց պատրաստութիւնով են զբաղուած:  
Հաշւած է, որ Անգլիայում բոլոր բանուորների

մէկ տասներորդական մասը զբաղուած է օղի և  
գարեջուր պատրաստելով:

Ծխախոտ, օղի, դինի և գարեջուր պատրաս-  
տելուց ու գործածելուց ինչպիսի՞ հետեանքներ  
են առաջ գալիս:

Արեղալի մասին մի հին զրոյց կալ, որ իրեւ  
թէ նա վիճել է սատանայի հետ, թէ չի թողնիլ  
որ իր խուցը մտնի, իսկ եթէ թողեց, այն ժամա-  
նակ կըկատարէ այն բանն, ինչ որ իրեն կըհրա-  
մայէ սատանան: Պատմում են, որ իրը թէ սա-  
տանան ընդունեց վիրաւորուած, արիւնոտ թեւ  
կախ արած ագուաւի կերպարանք և ողբալի կեր-  
պով թսլրտալ սկսեց աբեղալի խցի շեմքի առջև: Արեղան խղճաց ագուաւին և ներս տարաւ նրան  
իւր խուցը. Եւ այն ժամանակ սատանան, խուցը  
մտնելով, արեղալին երեք ոճիր առաջարկեց՝ի ըն-  
տրութիւն. այնէ՝ սպանութիւն, շնութիւն կամ  
հարբեցողութիւն: Արեղան ընտրեց արբեցողու-  
թիւնը, մտածելով, թէ՛ եթէ հարբի, միայն վնաս  
կըտալ ինքն իրան: Բայց երբ նա խմեց, այն ժա-  
մանակ, խելքը կորցնելով, գնաց գիւղը և այնտեղ,  
կնոջ գալթակութեան տակ ընկնելով, շնութիւն  
գործեց, իսկ ապա և սպանութիւն, պաշտպանու-  
ելով իրաւ վրայ յարձակուող՝ կնոջ վերադարձող  
ամուսնուց:

Այսպէս են նկարագրում արբեցողութեան  
հետեանքները հին զրոյցի մէջ, և արդարեւ իրա-

կանութեան մէջ ալդպէս էլ է ոգելից խմիչքների  
գործածութեան հետեանքները: Սակաւ դէպօւմ  
է գողլ, մարդասպանն իւր գործը կատարում ըգ-  
գաստ ժամանակը: Դատարանների արձանագրու-  
թիւններից երեսում է, որ ոճիրների իննտասնե-  
րորդական մասը կատարում է հարբած գրու-  
թեան մէջ: Թէ ոճիրների մեծ մասը գինու գոր-  
ծածութիւնից է առաջանում, դրան ակներեւ ա-  
պացոյց կարող է ծառայել այն, որ Ամերիկայի  
Միացեալ-Նահանգներից մի քանիսում, ուր գինին,  
ոգելից խմիչքների ամեն տեսակի ներմուծումն և  
վաճառելը բոլորովին արգելուած է, ոճիրներ հա-  
մարեաւ թէ չեն պատահում. չըկալ ոչ գողութիւն,  
ոչ յափշտակութիւն, ոչ սպանութիւն, և բանտե-  
րը գատարկ են մնում:

Այսպէս է ոգելից խմիչքների գործածութեան  
մի հետեանքը:

Միւս հետեանքը—ալդ ոգելից խմիչքների  
վնասակար ազգեցութիւն ունենալն է՝ մարդկանց  
առողջութեան վրայ: Բացի նորանից, որ ոգելից  
խմիչքների գործածութիւնից առաջանում է յատ-  
կապէս՝ միմիայն խմողներին առանձնայատուկ՝ ցա-  
ւատանջ հիւանդութիւններ, որոնցից մեռնում են  
բազմաթիւ մարդիկ,—նկատուած է, որ խմոդ մար-  
դիկ, հիւանդանալով սովորական հիւանդութիւն-  
ներով՝ աւելի դժուար են առողջանում, այնպէս  
որ կեանքն ապահովագրելիս ապահովագրող ըն-

կերութիւնները միշտ աւելի շատ են տալիս նրանց կեանքի համար, որոնք գործ չեն ածում ոգելից խմիչքներ, քան նրանց համար, որոնք գործ են ածում:

Ոգելից խմիչքների գործածութեան միւս հետևանքն էլ այսպէս է:

Երբորդ և ամենասարսափելի հետևանքն ոգելից խմիչքների—այն է, որ գինին բժացնում է մարդկանց բանականութիւնն ու խղճմանքը. գինի գործադրելուց մարդիկ դառնում են աւելի կոշտ ու կոպիտ, աւելի լիմար և աւելի չար:

Ոգելից խմիչքների գործածութիւնից ինչ օգուտ կայ:

Ո՞չ մի օգուտ:

Օղու, զինու և գարեջրի պաշտպաններն առաջ հաւատացնում էին, թէ այդ խմիչքներն աւելացնում են առողջութիւնը, ուժը, տաքացնում են և ուրախացնում: Բայց այժմ անվիճելի կերպով ապացուցուած է, որ այդ սուստ է: Ոգելից խմիչքներն առողջութիւնը չեն, աւելացնում այն պատճառով, որ նրանք պարունակում են իրենց մէջ ուժեղ թոյն—ալկօհոլ, իսկ թոյնի գործածութիւնը չի կարող պնասակար չը լինել:

Այն, թէ գինին մարդուս ոյժը չի աւելացնում, ապացուցուած է արդէն շատ անգամ և նրանով, որ, համեմատելով ամիսների և տարիների ընթացքում խմող միատեսակ լաւ

վարպետի աշխատանքը, միշտ երևացել է, որ չը խմողն աշխատել է աւելի շատ և աւելի լաւ, քան թէ խմողը. ապացուցուած է և նրանով, որ այն զօրախմբի զինութիւնները, որոնք արշաւանքների ժամանակ օղի են ստացել, միշտ աւելի թոյլ ու լոգնող են գտնուել, քան նրանք, որոնց օղի չեն տուել:

Իսկ և իսկ ապացուցուած է և այն, որ գինին չէ տաքացնում, և որ տաքութիւնը գինի խըմելուց յետոյ երկար չի պահպանւում, և որ մարդկարճատև տաքութիւնից յետոյ աւելի էլ հովանում է, այնպէս որ երկարատև ցուրտը շատ անտանելի է հարբեցողի համար, քան չարբեցողի: Ամեն տարի սառչող մարդկանցից մեծամասնութիւնը ստուչում է միայն նրանից, որ գինով են տաքանում:

Իսկ այն ուրախութիւնը, որ գինուց է յառաջ գալիս, թէ իսկական և զուարձալի ուրախութիւն չէ, կարիք չըկայ և ապացուցանելու: Ամեն մի մարդ գիտէ, թէ ինչ է խմիչքի ուրախութիւնը: Որժէ միայն նայել քաղաքներում այն բանի վրայ, թէ ինչ է կատարելում տօն օրերը պանդոկներում, և գիւղերում էլ այն բանի վրայ, թէ ինչ է կատարելում այնտեղ տօներին, կնունքներին և հարսանիքներին: Այդ հարբած ուրախութիւնը միշտ վերջանում է հայհոյանքներով, թակ ու մահակով, տուր ու գմփոցով, ոճիների ամեն տեսակով

և մարդկային արժանապատութեան ստորացմամբ։  
Գինին չէ աւելացնում առողջութիւնը, ոչ  
ուժը, ոչ տաքութիւնը, ոչ ուրախութիւնը, այլ  
բերում է մարդկանց մեծ չարիք։ Եւ ուստի, թը-  
րում է թէ՝ ամեն մի խելօք և բարի մարդու վա-  
յել է որ ոչ թէ միայն ինքն անձամբ գործ չածէ  
ոգելից խմիչքներ, այլ և բոլոր ուժով աշխատէ  
վերջ դնել այդ անօգուտ և վնասակար թոյնի  
գործածութեանը։

Բայց, դժբախտաբար, ամենեին այդ չէ կա-  
տարում։ Մարդիկ այնպէս թանկ են գնահատում  
հին սովորութիւններն ու բարքերը, այնպէս դժու-  
արութեամբ են յետ սովորում նրանցից, որ մեր  
ժամանակում կան բազմաթիւ լաւ, բարի, խելօք  
մարդիկ, որոնք ոչ թէ միայն չեն թողնում ոգե-  
լից խմիչքների գործածութիւնն և նրանցով ու-  
րիշներին հիւրասիրելը, այլ մինչև անդամ և՛, կա-  
րողացածին չափ, ջատագովում են այդ գործա-  
ծութիւնը։

«Գինին պախարակելի չէ, — ասում են նրանք,  
— այլ պախարակելին արբեցողութիւնն է։ Դաւիթ  
թագաւորն ասաց՝ «գինին ուրախացնում է մարդու  
սիրտը»։ Քրիստոս Կանալի հարսանիքում օրհնեց  
գինին։ Եթէ չխմեն, այն ժամանակ կառաւարու-  
թիւնը կզրկուի իւր ամենամեծ եկամուտից։ Զի  
կարելի դիմաւորել տօներին, կնունք, հարսանիք  
կատարել առանց գինու։ Զի կարելի չխմել առեւ-

տրի ժամանակ, թանկագին հիւրին ընդունելիս։  
«Մեր աշխատանքի և կարիքի ժամանակ չի կարե-  
լի նոյնպէս չխմել», ասում է խեղճ բանուոր մար-  
դը։ «Եթէ մենք խմում ենք միայն պատահած  
դէպքում և խելքները գլխներիս, ապա դրանով  
ոչ ոքի վնաս չենք տալիս», ասում են բարեկեցիկ  
մարդիկ։ «Մենք մեր խմելովը ոչ մէկին վնաս  
չենք տալիս, բացի մեզ։ Իսկ եթէ մենք վնասում  
ենք մեզ, այդ էլ մեր գործն է. մենք ոչ մէկին  
չենք ուզում սովորեցնել և ոչ ոքից չենք ուզում  
սովորել. մեզնով չէ սկսուել այդ, մեզնով էլ չի  
վերջանալ», ասում են թեթևամիտ մարդիկ։

Այսպէս են ասում զանազան դիրքի և հասա-  
կի մարդիկ, աշխատելով արդարացնել իրենց։ Բայց  
այդ արդարացումները, որ կհարկաւորուեին մեզ-  
նից մի քանի տասնեակ տարիներ առաջ, այժմ  
արդէն անպէտք են։ Լաւ կըլինէր այդ ասել այն  
ժամանակ, երբ ամենքը մտածում էին, թէ ոգե-  
լից խմիչքների գործածութիւնը անվնաս բաւա-  
կանութիւն է, թէ ոգելից խմիչքները մարդուս  
առողջութիւնն ու ոլժն աւելացնում են, երբ դեռ  
ըրգիտէին, թէ գինին իւր մէջ թոյն է պարունա-  
կում, որը միշտ վնասակար է մարդկանց, երբ դեռ  
մարդիկ ըրգիտէին արբեցողութեան այն սարսափե-  
լի հետեանքները, որոնք այժմ պարզ դրուած են  
ամենքի աչքի առջև։

Այդ կարելի էր ասել այն ժամանակ, երբ

գեռ ևս չըկալին այն հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ, որոնք վաղաժամ մեռնում են դառն չարչարանքների մէջ միայն նրա համար, որ սովորել են խմել ողելից խմէքներ և արդէն էլ չեն կարողանում լետ կենալ նրանց գործածութիւնից։ Լաւ կըլինէր ասել, թէ գինին անվնաս բաւականութիւն է, երբ գեռ մենք չէինք տեսել այն հարիւրաւոր ու հազարաւոր սովեալներին, չարչարուած կանանց ու երախաներին, որոնք միայն նրա համար են տառապում, որ ամուսիններն ու հայրերը նրանց սովորեցրել են գինու։ Լաւ կըլինէր այդ ասել, երբ գեռ մենք չէինք տեսել այն հարիւրաւոր ու հազարաւոր ոճրագործներին, լցուած ըանտերը, աքսորատեղիներն ու պատժավայրերն, և անառակութեամբ կործանուող կանանց, որոնք ընկած են այդ գըութեան մէջ միայն գինու շնորհիւ։ Լաւ կըլինէր ասել այդ, երբ գեռ մենք չէինք իմանում, որ հարիւր—հազարաւոր մարդիկ, սրոնք կարող էին ապրել իրանց և ուրիշների երջանելութեան համար, կործանել են իրենց ոյժերն ու իւրեանց միտքն ու հոգին միմիայն այն պատճառով, որ գոյութիւն ունեն ոգելից խմէքներ, և նրանք գալթակղուել են դըրանցով։ Եւ ուստի մեր ժամանակում էլ արդէն չի կարելի ասել, թէ գինի խմելը կամ չխմելը մասնաւոր գործ է, թէ մենք գինու չափաւոր գործածութիւնը վնասակար չենք համարում մեզ

համար և չենք կամենում ոչ մէկին սովորեցնել և ինքներս էլ չենք ուզում ոչ ոքից սովորել, թէ մեզնով չի սկսուել, և մեզնով էլ չի վերջանալ։ Այդ արդէն ալժմ չի կարելի ասել. գինի գործածելը կամ նրանից լետ կենալը մեր ժամանակում մասնաւոր գործ չէ, այլ ընդհանուր գործ է։ Այդմ բոլոր մարդիկ—միւնոյն է, ուզում են արդեօք այդ թէ ոչ—երկու բանակի են բաժանւած։ ոմանք կուտում են վնասակար թոյնի գործածութեան, ոգելից խմէքների դէմ, խօսքով և՝ գործով, գինի գործչածելով և նրանով չիւրասիրելով։ միւսներն այդ թոյնի գործածութիւնը պահպանում են և՝ խօսքով, այն էլ ամենից ուժեղ, և՝ օրինակով։ և այդ կոփեը մղուում է ալժմ բոլոր պետութիւնների մէջ և ահա արդէն քսան տարի է ինչ որ մի առանձին ուժով տեղի է ունենում նոյնպէս և Որուսաստանում։ Եթիւր գեռ մենք չըգնտէինք, այն ժամանակ մեզ վրայ մեղք չըկար, ասել է Քրիստոս։ Իսկ ալժմ մենք գիտենք, թէ ինչ ենք անում և ում ենք ծառալում՝ գինի գործածելով և նրանով հիւրասիրելով, և դրա համար, եթէ մենք՝ իմանալով գինու գործածութեան վնասակարութիւնը, շարունակում ենք խմել կամ հիւրասիրել նրանով, այն ժամանակ էլ չունենք ոչ մի արդարանալու միջոց։ Եւ թող չասեն, թէ չի կարելի չխմել և ը

Հիւրասիլել յակտնի դիպուածներում — տօներին,  
հարսանիքներին և ալդօրինակ դէպքերում, թէ  
ալդպէս են անում ամենքը, թէ ալդպէս են արել  
մեր հալրերն ու պապերը, և դրա համար չի կա-  
րելի որ միայն մենք բոլորից ջոկուենք։ Այդ ճշ-  
մարիտ չէ. մեր հալրերն ու պապերը թողել են  
այն չար ու վնասակար սովորութիւնները, որոնց  
չարեք լինելը նրանց համար պարզուել է. ալդպէս  
և մենք ենք պարտաւոր թողնել այն չարիքն, որ  
մեր ժամանակ պարզուեց։ Իսկ այն, թէ գինին  
մեր ժամանակ մի սարսափելի չարեք է դար-  
ձել, դրան կասկած չկայ։ Ի՞նչպէս ես՝ իմանալով,  
որ ոգելից խմիչքների գործածութիւնը չարեք է,  
հարիւր-հազարաւոր մարդկանց կործանող է, հիւ-  
րասիլեմ ալդ չարեցով բարեկամներիս, որոնք հա-  
ւաքում են ինձ մօտ տօն օրերը, կնունքներին  
կամ հարսանիքներին։

Ամեն ժամանակ ամենայն ինչ այնպէս չէ ե-  
ղել, ինչպէս ալժմ, է, այլ ամեն բան փոփոխուել  
է վատից դէպի լաւը, և փոխուել է ոչ թէ ինքն  
իրան, այլ մարդկանց ձեռքով, որոնք կատարում  
էին այն, ինչ որ նրանցից պահանջում էին իւր-  
եանց խիղճն ու բանականութիւնն։ Եւ ալժմ մեր  
բանականութիւնն ու խիղճն ամենայն թախան-  
ձանքով պահանջում են մեզնից, որ մենք դադա-  
րենք գինի խմելուց և նրանով հիւրասիլուց։

Առհասարակ մարդիկ դատապարտում են և

արհամարում այն հաբեցողներին, որոնք գինետր-  
ներում և պանդոկներում կոնծում են մինչեւ դա-  
տողութիւն կորցնելը և արդէն այնպէս են կպել  
գինուն, որ չեն կարողանում լետ կենալ և ինչ  
ունեն՝ խմիչքի են տալիս։ Այն մարդիկ էլ, որոնք  
առնում են գինին տուն տանում, և չափաւոր խը-  
մում են ամեն օր, և գինով հիւրասիլում իրենց  
հիւրերին այն դիպուածներում, երբ ալդ ընդու-  
նուած է, — ալդպիսիները լաւ և պատուաւոր և  
ոչ մի վատ բան չանող են համարւում։ Իսկ այն  
ինչ, հենց այդպիսիներն են հարբեցողներից էլ  
աւելի շատ դատապարտութեան արժանի։

Հարբեցողները դարձել են հարբեցող միմիայն  
այն պատճառով, որ չարբեցողները՝ իրանց վնաս  
ըբտալով, սովորեցըրել են նրանց գինի խմելը, գայ-  
թակղեցըրել իրենց օրինակով։ Հարբեցողներն եր-  
բէք արբեցող չէին դառնալ, եթէ չտեսնէին ըո-  
լոր մարդկանցից յարգուած ու մեծարուած գինի  
խմողներին և նրանով հիւրասիլողներին։ Ոչ մի  
անգամ դեռ գինի չխմած ջահէլը գինու համն և  
ներգործութիւնն իմանում է տօներին, հարսա-  
նիքների ժամանակ ալդ պատուաւոր, չարբեցող,  
բայց խմող և յայտնի դիպուածներում հիւրասի-  
լող մարդկանց մօտ։

Եւ դրա համար, ով խմում է գինի, հենց  
թէկուզ որչափ էլ չափաւոր խմէ, ինչ տեսակ էլ  
մասնաւոր, ամենքի կողմից ընդունուած դէպքե-

ըուսմ հիւրասիրէ նրանով, — մեծ մեղք է գործում։  
Նա գալիթակղեցնում է նրանց որոնց գալիթակղեց-  
նել չէ հրամայուած, որոնց մասին ասուած է՝  
«վայ նրան, որ կը գալիթակղեցնէ այս փոքրիկներից  
մէկն ու մէկին»։

Սառաւ են՝ մեզնով չէ սկսուել, մեզնով էլ չի  
վերջանալ։ Ոչ, մեզնով էլ կը վերջանալ, եթէ մի-  
այն մենք հասկանանք, որ մեզնից իւրաքանչիւրի  
համար գինի խմելը կամ շխմելը մի և նոյն բանը  
չէ, որ իւրաքանչիւր մի գնուած շշով, իւրաքան-  
չիւր մի խմած բաժակ գինով մենք ծառայում  
ենք այն սարսափելի սատանայական գործին, որից  
կործանուում են մարդկային լաւ ոյժերը, իսկ ընդ-  
հակառակը, մենք յետ կենալով գինուց և տօնե-  
րին, հարսանիքներին և կնունքներին սովորութիւն  
դարձած գինու անմիտ գործածութիւնն ընդհա-  
տելով՝ կը կատարենք մեզ համար մի շատ կարեոր  
գործ, — մեր հոգու, Սատծոյ գործը։

Եթէ միայն մենք հասկանայինք այս, մեզա-  
նով էլ կը վերջանար արբեցողութիւնն։  
Եւ գրա համար ով ուզում ես դու եղիր, ըն-  
թերցնլ, արդեօք դեռ կեանքի համար պատրաս-  
տուող պատանի ես, թէ արդէն կեանքի հիմքը  
դրած հասակաւոր մարդ, տանտէր — տղամարդ ես,  
թէ կինարմատ — տանտիկին, կամ զառամեալ ծե-  
րունի, — երբ արդէն մօտեցել է ժամանակի քո  
կատարած գործերի հաշիւը տալու, — արդեօք հա-

րուստ ես դու թէ աղքատ, լայտնի ես, թէ ան-  
լայտ, — ով որ էլ դու ուզում ես եղիր, այլ ես  
չես կարող երկու բանակների մէջ տեղը մնալ, գու-  
անխուսափելի կերպով պարտաւոր ես ընտրել եր-  
կուսից մէկը, այն է՝ հակառակ գործել արբեցո-  
զութեան կամ օժանդակել նրան, — ծառայել Սա-  
տծուն կամ մամօնային։

Եթէ դու, դեռ երբէք գինի չխմած, նրա թոյ-  
նով չվարակուած ջահէլ ես, — թանգ գնահատիր  
քո գալիթակղութիւնից զերծ ու անարատ մնալգ։  
Եթէ դու գալիթակղութիւնից ճաշակես, էլ քեզ  
համար արդէն խիստ գժուար կը լինի նրանից ձեռք  
վերցնել։ Եւ մի հաւատար, թէ գինին կաւելացնէ  
քո ուրախութիւնը։ Քո տարիներին յատուկ ուրա-  
խութիւնը անկեղծ, լաւ ուրախութիւն է, և գի-  
նին միայն քո անկեղծ, անմեղ ուրախութիւնը կը  
դարձնէ հարբած, անմիտ և կեղտոտ ուրախու-  
թիւն։ Գլխաւորն այն է, որ փախուստ տաս գի-  
նուց, որովհետեւ քո տարիներում ամենից գժուար  
բանն ուրիշների գալիթակղութիւններից յետ կե-  
նալն է. իսկ գինին թուլացնում է քո հասակի  
համար ամենակարևորը՝ բանականութեան ոյժը,  
որն ընդդիմադրում է գալիթակղութիւններին։ Խը-  
մելով, դու անում ես այն, ինչ որ նոյն իսկ չէիր  
մտածում անել զգաստ ժամանակից, ինչու համար  
դու ինքդ քեզ ենթարկես ալդպիսի սարսափելի  
վտանգի։

Եթէ դու հասակ առած մարդ ես, արդէն քեզ համար սովորութիւն ես դարձրել ոգելից խըմիչք գործածելը կամ սկսել ես ընտելանալ նրանց, շուտափով՝ քանի դու ժամանակ կայ, ետ դարձիր այդ զարհուրելի սովորութիւնից, ապա թէ ոչ չես կարող լետ նայել՝ տեսնելու թէ ինչպէս նա արդէն քեզ իշխել է, և դու կարող ես դառնալ նոցանից մէկն, որպէս այն անդարձ խորտակուած հարբեցողները, որոնք խորտակուել են գինուց: Նրանք ամենքն էլ սկսել են այնպէս, ինչպէս, և դու: Եթէ դու հենց ունենալիք էլ ամբողջ կեանքումդ քեզ գինու գործածութեան չափաւոր աստիճանի վրայ պահելու կարողութիւն և ինքդ էլ չդառնալիք հարբեցող, ապա շարունակելով գինի խմելը և նորանով հիւրասիրելը՝ կարող է պատահել որ, դարձնես հարբեցող՝ փոքրիկ եղբօրդ, կընոջդ, երախաներիդ, որոնք չեն ունենալ՝ ինչպէս դու, գինու գործածութեան չափաւոր աստիճանի վրայ մնալու ոյժ: Գլխաւորն այս է, որ հասկանաս այն, թէ քեզ վրայ, որպէս մարդու, որը գտնւում է կեանքի ամենաուժեղ հասակում, որպէս տանտիրոջ կամ տանտիկնոջ, կեանքի առաջնորդի վրայ՝ պարտականութիւն է դրուած քո տանեցիների կեանքի առաջնորդութիւնն: Եւ դրա համար, եթէ դու իմանում ես, որ գինին ոչ մի օգուտ չէ բերում, մարդկանց մեծ չարիք է բերում, այն ժամանակ դու ոչ միայն պարտա-

որ չես ստրկօրէն կրկնելու այն, ինչ որ արել են քո հայրերն ու պապերը՝ գինի գործածել, գնել և նրանով հիւրասիրելը՝ այլ ընդհակառակը պարտաւոր ես վոխել այդ սովորութիւնը և փոխարինել ուրիշով:

Եւ մի վախենար, որ տօներին, կնունքներին, հարսանիքներին խմելու սովորութեան փոփոխութիւնը շատ կվիրաւորի ու կյուզի մարդկանց: Նատ տեղ արդէն սկսում են կատարել այդ, գինով հիւրասիրելը փոխարինելով քաղցրեղէնի և ոչ ոգելից խմեքների հիւրասիրութեամբ. և մարդիկ միայն սկզբներում, և այն էլ ամենից լիմարներն, են զարմանում, բայց շուտով ընտելանում են և հաւանում:

Եթէ դու ծեր մարդ ես, այն հասակում, երբէսօր չէ եգուց պիտի հաշիւ տաս Աստծուն այն մասին, թէ ինչպէս ես նրան ծառալիել, և դու, փոխանակ նրան, որ լետ կացնես երիտասարդ, անփորձ մարդկանց գինու գործածութիւնից, որի սարսափելի չարիք լինելը դու չէիր կարող տեսած չըլինել քո կեանքի ընթացքում, մերձաւորներիդ գայթակեցնում ես քո օրինակով՝ գինի խմելով կամ նրանով հիւրասիրելով, դու մեծ յանցանք ես գործում:

Վայ աշխարհին դաշտակղութեանց համար: Գայթակղութիւնները պէտք է անցնեն աշխարհի վրայով, բայց վայ նրան, որի վրայովն նրանք կանցնեն:

Միայն թէ հասկանալինք այն, որ գինու գործածութեան մէջ այժմ միջին ճանապարհ չըկալ, և ուզենք թէ չուզենք այդ—մենք պարտաւոր ենք երկուսից մէկն ընտրել, այն է՝ ծառայել Սատծուն կամ մամօնալին:

«Ով որ ինձ հետ չէ, հակառակ է ինձ. և ով որ ինձ հետ չէ ժողովում ցըռւմ է» (Մթ. ՓԲ., 30):



ՀՀ Ազգային գրադարան



NL0316829

